

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՍՈՆՅԱՆ ԳԱՅԱՆԵ ՄԻՍՈՆԻ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԿԱՎԱԳԸ ԵՎ ԻՐ
«ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՒՄԱՐԻՍ ՀԱՅԿԱԶՆԵԱՅ»-Ն

ԻԵ. 00.01 «Կրոնի տեսություն և պատմություն (կրոնագիտություն)»
մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ը

ԵՐԵՎԱՆ-2013

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

СИМОНЯН ГАЯНЕ СИМОНОВНА

ОГНЕС САРКАВАГ И ЕГО
“ТОЛКОВАНИЕ АРМЯНСКОГО КАЛЕНДАРЯ”

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата
исторических наук по специальности
25. 00. 01 « Теория и история религии (религиоведение)»

Ереван-2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Ռ. Հ. Վարդանյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Ս. Ս. Մկրտչյան
պատմական գիտությունների թեկնածու
Լ. Դ. Սիմոնյան


Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Մատենադարան. Մեսրոպ
Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 26-ին՝ ժամը 14:00-ին,
ԵՊՀ-ում գործող ԲՈՀ-ի՝ Աստվածաբանության 068 մասնագիտական խորհրդի
նիստում:

Հասցեն՝ ք. Երևան 0025, Աբովյան 52, ԵՊՀ 6-րդ մասնաշենքի դահլիճում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 25-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու  Ա. Յ. Բալյան

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете.

Научный руководитель՝ доктор исторических наук Р. Ов. Варданян

Официальные оппоненты՝ доктор исторических наук С. С. Мкртчян
кандидат исторических наук Л. Д. Симонян

Ведущая организация՝ Ереванский Матенадаран. Институт древних
рукописей имени Месропа Маштоца

Защита состоится 26-го декабря 2013 г., в 14:00 часов на заседании
специализированного совета ВАК Богословии 068 при Ереванском
государственном университете.

Адрес: г. Ереван 0025, ул. Абовяна, 52, ЕГУ, 6-ой корпус, актовый зал.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 26-го ноября 2013 г.

Ученый секретарь специализированного совета

кандидат исторических наук  А. Балян

idios of the 10-year full moon, and due to April 4, the idios of the 10-year and 1-year full moon.

One year was added to the Armenian calendar due to the end of the Armenian cycle and in the result the fiscal of 532 has become 533.

The following parts of the collection such as the “Canons of the Nation”, “Precise Canon of 532 due to the Roman Calendar”, “Precise Canons of 532 due to the fiscal Armenian Calendar (due to Sarkavag)” have been restored.

Sarkavag compares the Calendars of 15 nations in “Canons of the Nations” the 6 out of which he introduced into the Armenian Calendar called “Copies”.

With formation of the 532 in Easter lists(zatkazuzak) the by Hovhanness Sarkavag put the basis of the new system of dating which is the Armenian Lesser dating or Sarkavag-created fiscal calendar which starts in 1085 and finishes in 1616. The research paper considers and appreciates the inputs made by Hovhanness Sarkavag in the field of calendar science, gives the characteristics of the calendar system or Sarkavag-created calendar as well as there are various and detailed clarifications referring to the calendar collection and its constituting parts.

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: 11-12-րդ դարերի հանրագիտակ ու բազմաբովանդակ ստեղծագործական ժառանգություն ավանդած հեղինակի, Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանության հիմնասյուններից մեկի՝ Հովհաննես Սարկավագի կյանքն ու, հատկապես, տոմարական բնույթի ստեղծագործությունները գիտական ճանաչողության տեսանկյունից դեռևս ամբողջովին յուրացված չեն:

Ատենախոսության մեջ ներկայացվել ու հիմնավորվել են Հովհաննես Սարկավագի՝ հայ գրական մշակույթում և տոմարագիտության պատմության մեջ կատարած առանձնակի կարևոր դերակատարությունը, տոմարագիտական մի շարք խնդիրներ, առանց որոնց անհնար է հարաբերակցել հայ մատենագրությամբ մեզ ավանդված հայոց Մեծ և Փոքր՝ Սարկավագադիր, ինչպես նաև հայոց ու տարբեր ազգերի՝ արարչության քրիստոնեական թվականները, հույան ու հայոց, ինչպես նաև իր ժամանակի տարբեր ազգերի գործածական տոմարները, որոնք ոչ միայն ունեն ազգային, այլև միջազգային նշանակություն:

Ատենախոսության նպատակը: Ուսումնասիրության նպատակն է կոնկրետ ժամանակատարածական միջավայրում Հովհաննես Սարկավագ ֆենոմենի պատմաֆունկցիոնալ նշանակության բացահայտումը և իր տոմարական ժառանգության ժամանակակից գնահատումը, ոչ միայն ի մի բերել այն ամենը, ինչ կատարվել է Հովհաննես Սարկավագի կենսագրության, ստեղծագործությունների ուսումնասիրության բնագավառում, այլև ճշգրտել Սարկավագի ծննդյան ու մահվան, առ Մելիքշահ կատարած ուղևորության թվականները, Սարկավագի կենսագրությունը հարստացնել ոչ միայն արդեն հայտնի փաստերի նորովի մեկնաբանությամբ, այլև նորերի բացահայտմամբ:

Հովհաննես Սարկավագի երկերի բովանդակային վերլուծությամբ միաժամանակ փորձ է արվել բացահայտելու Հայ Առաքելական Եկեղեցու կատարած պատմական կարևորագույն դերակատարությունը, այն է՝ եկեղեցու ընդերքում սերած մշակույթի, գիտության ծառայեցումը հայի ինքնության պահպանմանը, համաշխարհային նմանատիպ գորընթացներում իր առանձնահատկությունների ու յուրօրինակության արտացոլմանը: Սարկավագի երկերում դրսևորված ենք գտնում մի դեպքում՝ Հայ Առաքելական Եկեղեցու՝ քրիստոնեական աստվածաբանության ու վարդապետության հնամենի ավանդների հանդեպ ունեցած խիստ պահպանողական ու հավատարիմ վերաբերմունքը, մյուս դեպքում՝ դրանց նորովի կիրարկումն ու զարգացումը՝ նոր ժամանակներին համահունչ, այլ դեպքերում՝ դեպի ապագա ուղղվածությունը:

Մեր նպատակներից կարևորագույնը Հովհաննես Սարկավագի անվամբ մեզ հասած՝ առանձին-առանձին տոմարական բնագրերի հարաբերակցության և դրանց հեղինակային պատկանելության խնդիրների և տոմարական հարցերի պարզաբանումն է:

Ատենախառության մեթոդի հիմքը Հովհաննես Սարկավագի կենսագրության ու ստեղծագործությունների պատմահամեմատական համակարգված վերլուծությունն է: Միևնույն ժամանակ կիրառվել են նորագույն՝ տոմարական ու տոնացույցային մեթոդները:

Ատենախառության գիտական նորությունը և գործնական նշանակությունը:

Փորձ է արվել ամբողջության մեջ տեսնելու Հովհաննես Սարկավագին՝ իբրև բանաստեղծի, տոմարագետի, հայոց տոմարի բարենորոգչի, ուղղադավան վարդապետի, քաղաքական իրադարձությունների մասնակցի: Նրա՝ առանձին տոմարական աշխատություններ կարծված բնագրերը դիտված են որպես տոմարական՝ «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» ժողովածուի բաղկացուցիչ մասեր: Բացահայտվել է ինչպես տոմարական ժողովածուի վերնագիրը, այնպես էլ՝ նրա ստեղծման ժամանակը՝ 1094 թվ.: Հստակեցվել ու ճշգրտվել են պատկերացումները Սարկավագադիր տոմարի վերաբերյալ:

Առավել ճշգրտված են Հովհաննես Սարկավագի ծննդյան ու մահվան թվականները, համապատասխանաբար՝ մոտավորապես ներկա 1057 թվական, և 1130 թվ.-ի փետրավարի 11 (=Հայոց ՇՀԸ):

Ուսումնասիրության գործնական նշանակությունն առավել կարևորվում է նրանով, որ հիմնավորվել են տոմարագիտական մի շարք խնդիրներ, առանց որոնց անհնար է հարաբերակցել հայոց Մեծ և Փոքր՝ Սարկավագադիր թվականները, հուլյան ու հայոց տոմարները, իր ժամանակի զանազան արարչության քրիստոնեական թվականության համակարգերը ևն:

Ճշգրտվել ու վերականգնվել են Հովհաննես Սարկավագի ՇԼԲ-ամյա Զատկացուցակները՝ հռոմեական և հայոց անշարժ տոմարի ամիս-ամսաթվերով, և «Ազգաց կանոնները»:

Հովհաննես Սարկավագի ողջ ստեղծագործական ժառանգությունը միտված է Հայ Առաքելական Եկեղեցու (իբրև հայրենիք, պետություն, մշակույթ, կրթություն, գիտություն և հավատ) դերի ու նշանակության բարձրացմանը՝ դառնալով ժամանակի տարաբնույթ մարտահրավերների հաղթահարման կարևորագույն գրավական ու առնվազնային:

Սկզբնաղբյուրների և գրականության տեսություն: Սկզբնաղբյուրների ու գրականության տեսության մեջ ներկայացրել ենք այն բոլոր սկզբնաղբյուրները, որոնք հնարավորություն են ընձեռել մեզ քննելու ոչ միայն նրա կյանքն ու գործունեությունը, այլև պատկերացում կազմելու նրանից մնացած բազմաբնույթ գրավոր ժառանգության մասին: Գրականության տեսության մեջ անդրադարձել ենք Հովհաննես Սարկավագի տոմարի ու ստեղծագործությունների ուսումնասիրության պատմությանը՝ գնահատելով կատարած աշխատանքները՝ առավելագույն ուշադրությունը սեպելով Սարկավագադիր տոմարի առանձնահատկություններին ու նրա բերած նորություններին: Սարկավագադիր տոմարի ուսումնասիրության պատմությանը նվիրված մեր հոդվածներում մենք անդրադարձել ենք այն առավելություններին ու

The research paper considers Sarkavag's life and activity putting the stress particularly on the study of his calendar heritage.

The first two chapters of the research paper deal with Sarkavag's life and activity as well as a number of diverse problems relating to the calendar heritage.

The study of the sources shows that Hovhannes Sarkavag was born nearly in 1057 and died in 1130. He was a celibate priest and Vardapet (the rank of Doctor for the Armenian Church). He was also one of the outstanding representatives of doctrine and ideology of the Armenian Church and led a monastic life.

On the basis of implementation of the new ways of calendar and church calendar as well as the historical comparative method there has been carried out the study of the systemized analysis of the information contained in the original sources. It has been stated that Sarkavag created a calendar collection and there has been found out not only the precise title of the collection-book, which is the "Interpretation of the Armenian Calendar", but also the exact year of creation, which is 1094.

The calendar collection, on the whole, is composed of the theoretical-interpretational and practical-implicational parts.

In the theoretical part Hovhanness Sarkavag interpreted the Armenian calendar starting from its origin, revealed the reasons for calendar fiscalty – always 365,1/4 days- and movability of the feasts. There were given the detailed date characteristics particularly of the Armenian Church feasts that are based on the information given in the Bible Book.

In the various original writings that constitute part of the interpretation Hovhanness Sarkavag gave explanation to the characteristics of the year of 532, interpreted the problems of the 19-year cycle of the full moon and its first-year or on April 4 full moon. All these are based on both the Bible Book and the information given in the writings of Church Fathers. All the information testifies to the fact that in the full moon on April 4 there happened the Moses Easter, Exodus, Passing over the Red Sea, the Easter restored by Zaqareh, Entry to the Holy Land, as well as the tortures, crucifixion and resurrection of Christ.

Hovhaness Sarkavag put the years of Creation known to different nations in relation to the Armenian year of 532 due to the April 13, the

В разных подлинниках, составляющие часть «Толкования», Дьякон Ованнес раскрывает особенности 532-летнего пасхального цикла, разъясняет вопросы насчет 19-летнего цикла полнолуния и первого года этого лунного цикла, то есть фазы полнолуния 4-го апреля, основываясь на библейские сведения и сочинения первых отцов церкви. Все источники свидетельствуют, что в год фазы полнолуния 4-го апреля были Пасха Моисея, исход из Египта, переход через Красное море, восстановленная Захарией Пасха, вхождение в Землю Обетованную, а также страсти Христовы, распятие и воскресение.

В свое время Дьякон Ованнес известные разным народам годы Творения выразил годами армянского 532-летнего цикла, приняв в качестве подсчета для первого года фазы полнолуния 13-ое апреля, а для десятого – 4-ое апреля, согласовав первые годы прикладных лет Творения с этим принципом.

В результате завершения цикла Хайка (1460 лет) в армянском календаре был прибавлен один год (1461 лет): постоянное число 532 стало 533.

В диссертации восстановлены следующие части сборника: “Каноны народов” “Точнейшие каноны 532-летнего (пасхального) цикла по Римскому календарю”, “Точнейшие каноны 532-летнего (пасхального) цикла по Армянскому неподвижному календарю (Дьякона)”.

В “Канолах народов” Дьякон Ованнес сопоставил календари 15-и народов, шесть из которых внесены в армянские календарные “Копии”.

Созданием 532-летнего пасхального цикла Дьякона Ованнеса были заложены основы новой системы армянского летоисчисления: Малого армянского календаря или неподвижного календаря Дьякона, который начинается с настоящего 1085 года и заканчивается 1616 годом.

В диссертации оценивается вклад Дьякона Ованнеса в сферу календароведения, выявляются особенности созданной им системы календаря, а также освещаются множество вопросов, касающиеся календарного сборника и составляющих его частей и элементов.

GAYANE SIMON SIMONYAN
HOVHANNES SARKAVAG AND HIS
«INTERPRETATION OF THE ARMENIAN CALENDAR»
SUMMARY

Hovhannes Sarkavag (Deacon), the 11-12 cc. encyclopedist, is the author of a very rich heritage, which has its significant place in the history of culture.

անճշտություններին, որոնք թույլ են տվել ուսումնասիրողները հարցադրումների կապակցությամբ, և առաջադրել ու բնագրային տեղեկություններով հիմնավորել մեր տեսակետները:

Ատենախոսության փորձաքննությունն ու պաշտոնական հավանությունը:

Աշխատանքը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել հրապարակային պաշտպանության Երևանի պետական համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի աստվածաբանության ամբիոնի նիստում:

Ատենախոսության կառուցվածքը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, որին հաջորդում է սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության տեսությունը, երկու գլխից, եզրակացություններից: Այն նաև ունի սկզբնաղբյուրների և օգտագործված գրականության ցանկ: Ատենախոսությունն ամփոփված է եզրակացություններով: Ատենախոսությանը կցված է 2 հավելված, որտեղ տրված են Հովհաննես Սարկավագի՝ մեր վերականգնած Ջատկացուցակները՝ «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հռոմեացուց տոմարի», «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց՝ ըստ Հայոց անշարժ տոմարի» (Սարկավագի), ինչպես նաև ազնվականոն «Ազգաց կանոնների» վերականգնությունը:

Ատենախոսության բովանդակությունը: Ներածության մեջ ներկայացվել ենթեմայի արդիականությունը, աշխատության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանական հիմքերը:

ԳԼՈՒԽ Ա

Հովհաննես Սարկավագի կյանքը և ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության առաջին գլուխը բաղկացած է երկու հատվածից:

Առաջին հատվածում քննել ենք Հովհաննես Սարկավագի կյանքին առնչվող տեղեկությունները, իսկ երկրորդում՝ նրա ստեղծագործությունները: Առաջին հատվածում պատմական տեղեկությունների ու որոշ ստեղծագործությունների քննությամբ ցույց ենք տվել, որ Հովհաննես Սարկավագը ծնվել է մոտավորապես 1057 թվականին Փառիստում՝ քահանայական ընտանիքում: Նախակրթությունն ստացել է ծննդավայրում, ապա տեղափոխվել Հաղբատ և հանձնվել քեռու դաստիարակությանը: Քեռու հանձնարարությամբ Հաղբատում ուսանել է ժամանակի ամենալուսավոր վարդապետներից մեկի՝ Գեորգ Ուռճացու մոտ:

Սարկավագի կյանքն ու գործունեությունը սերտորեն առնչվում են Բարսեղ Անեցի կաթողիկոսի հետ:

Քրիստոնեական ներկա 1082 թվականին է Բարսեղ Անեցին Հաղբատում փոխկաթողիկոս ձեռնադրվել և «զՍարգիս ետ ձեռնադրել եպիսկոպոս Հաղբատայ...», որից հետո Հովհաննես Սարկավագին իր հետ տարել է Անի:

Սարկավագի երկերի հետազայում ավելացված վերնագրերում հիշատակվող Սարգիսը Հովհաննես Սարկավագի ժամանակակից Սարգիս Առաջինն է՝ Հաղբատի առաջնորդը: «Առ Սարգիս» տոմարական բովանդակությամբ

բնագիրը, «Նորին առ Սարգիս Ողբը»-ն ուղղված են նրան, ումից նաև, մեր կարծիքով, ստացել է ինչպես Աղոթագիրք ստեղծելու, այնպես էլ հայոց տոմարը մեկնելու հանձնարարական:

Սարկավագը մինչև 1091 թվականն է դարձել կուսակրոն քահանա, ապա, հասնելով վարդապետության աստիճանի, դարձել Անիի վերաբացված վարդապետանոցի ուսուցչապետը: Նրան են աշակերտել ժամանակի ամենալուսավոր վարդապետներն ու երեցները:

Բարսեղ Անեցին առաջին անգամ Կյուրիկե թագավորի հետ ուղևորվել է Մելիքշահ սուլթանի մոտ 1083 թվականին: Հնարավոր է, որ այս ժամանակ Մելիքշահը նաև պահանջած լիներ նրանցից տոմարական բարեփոխություն իրականացնել, քանի որ իր սուլթանության տարածքում արդեն սկսել էին այդ գործընթացը:

1091 թվականին Բարսեղ Անեցին բազմամարդ պատվիրակությամբ ձեռնարկել է նաև 2-րդ ուղևորությունն առ Մելիքշահ: Այդ պատվիրակության մեջ եղել է նաև Հովհաննես Սարկավագը: Ուղևորությունը շարունակվել է դեպի Ուռնա:

1092/93 թթ. Մելիքշահի մահվան պատճառով նրանք վերադարձել են Անի:

1094 թ. ստեղծել է «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, որը հետագայում տոմարի դասագիրք է դարձել:

1110 թ. գրել է տոմարական խնդիրների վերաբերյալ «Առ Սարգիս» նամակը:

1113 թվականին՝ Լուսնի լրման և Արևի խավարման մասին նամակը:

1116 թվականին՝ նամակ անհայտ մեկին:

Հավանաբար 1125 թվականից հետո, երբ Անին կրկին անցել է այլադավանների ձեռքը, կյանքի վերջին տարիներն անցկացրել է Հաղբատում:

Ըստ սկզբնաղբյուրների տեղեկությունների՝ «բարոք կացեալ ի ժիր մշակութեան»՝ մահացել է Հաղբատում 1130 թվականի փետրվարի 11-ին:

Ատենախոսության առաջին գլխի 2-րդ մասը նվիրված է Հովհաննես Սարկավագի տարաբնույթ ստեղծագործությունների հպանցիկ քննությանը: Այստեղ խիստ ուրվագծորեն ենք ներկայացրել Հովհաննես Սարկավագի գրական, պատմագրական, թվարանական, աստվածաբանական երկերը: Միայն հատուկենտ ստեղծագործություններ («Նորին (Յովհաննու) առ Սարգիս Ողբը», «Ամբաստանություն գանձնե...», «Առ կոյրն աչագեղոյ», «Հարցումն...») առավել մանրամասնել ենք՝ կենսագրական որոշ տեղեկություններ հարստացնելու նպատակով:

«Առ կոյր աչագեղոյն եւ լուսավոր» թուղթն ուղղված է, մեր կարծիքով, Ուռնայի Ստեփանոս արքեպիսկոպոսին, ում 1108/09 թվականներին են կուրացրել:

Տվյալներ չկան, որոնցով ապացուցվի, թե Հովհաննես Սարկավագը գրել է երկհատոր «Պատմություն»:

Հովհաննես Սարկավագը գրել է փոքրածավալ պատմական երկեր՝ կապված սկյութների բռնակալության, Մելիքշահի, հույների Ալեքս թագավորի հետ

4. Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Է, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 217-235:

СИМОНЯН ГАЯНЕ СИМОНОВНА

ОГННЕС САРКАВАГ И ЕГО
“ТОЛКОВАНИЕ АРМЯНСКОГО КАЛЕНДАРЯ”
РЕЗЮМЕ

Энциклопедист, автор 11-12-ых веков Ованнес Саркаваг (Дьякон) оставил богатое литературное наследие, которое внесло свой неповторимый вклад в историю армянской культуры.

Диссертация посвящена исследованию жизни и произведений, в частности календарного наследия, Дьякона Ованнеса.

В двух главах диссертации анализируется жизненный путь и деятельность автора, а также множество вопросов, связанных с календарным наследием.

Исследование первоисточников показывает, что Дьякон Ованнес родился примерно в 1057 году и скончался в 1130 году. Он был иеромонахом и архимандритом, выдающимся представителем вероучения и идеологии Армянской Апостольской Церкви и временами вел отшельнический образ жизни.

Посредством новых календарных и церковно-календарных подходов, а также применением историко-сравнительных методов осуществляется системный анализ сведений первоисточников. В работе обосновывается, что Дьякон создал календарный сборник, уточняется не только название сборника – “Толкование Армянского календаря”, – но и определяется время его создания – 1094 год.

В целом календарный сборник Дьякона Ованнеса состоит из теоретико-толковательного и практически-прикладного частей.

В теоретической части Дьякон комментирует армянский календарь, начиная с его происхождения, закладывает основы его неподвижности (365 и 1/4 днями), а также раскрывает причины подвижности праздников. Комментируются преимущественно особенности календарных дат армянских церковных праздников, которые составлены на основе сведений книг Св. Писания.

Սարկավագադիր տումարում նահանջ տարիներին հավելադիր մեկ օրն ավելացվել է Մեհեկան ամսին, որը դարձել է 31 օր, իսկ նահանջի օրը համապատասխանել է Մեհեկի 23-ին = փետրվարի 29-ին:

«Ազգաց ազնվականություն» և առկա «Լուսնացույցում», ինչպես և մեկնության մեջ կիրառել է նոր հնգեակների և վեցեակների համակարգը՝ սկիզբ ընդունելով ապրիլ 4-ի լրման տարին:

«Մեկնություն տումարիս Հայկազնեայ» տումարական ժողովածուի նախնական բնագրում եղել է երկու Շ-եակ Զատկացուցակ, որոնց համար նախօրինակ է ծառայել Անանիա Շիրակացու հռոմեացոց տումարով կազմած Շ-եակը, որն էլ խմբագրել է Հովհաննես Սարկավագը և դրան համապատասխան ստեղծել երկու Զատկացուցակ՝ «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց» ըստ Հռոմեացոց տումարի» և «Ազնուականոնք ՇԼԲ-ամաց» ըստ Հայոց անշարժ տումարի» (Սարկավագի):

Հովհաննես Սարկավագի ստեղծած ՇԼԲ-ամյա Զատկացուցակների հենքի վրա է առաջացել հայոց Փոքր կամ Սարկավագադիր թվականը, որի Ա տարին 1085 թվականն է, և ավարտվում է 1616 թվականին:

Թեև Սարկավագադիր տումարի տեսական տարեսկիզբը Նաասարդի 1 = օգոստոսի 11-ն է, սակայն գործնականում այն՝ եկեղեցական տարեսկիզբն է՝ Քրիստոսի Մննդյան ու Յայտության օրը՝ հունվարի 6 = Քաղոց 29-ը, որի պահոց օրերի սահմանում է հռոմեական տումարի տարեսկիզբը՝ հունվարի 1-ը:

Սարկավագն իբրև ժամանակի սկիզբ դիտում է գարնանամուտը, այն է՝ բնատնտեսական տարեսկիզբը, որը համապատասխանել է եբրայական Նիսանի 1 = մարտի ԻԲ = Արեգ ԺԴ-ին:

Հայոց Մեծ և Փոքր թվականների տարբերությունը 533 տարի է, իսկ Սարկավագադիր և ներկա թվականներինը՝ 1084:

Ատենախոսության հիմնադրություններն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տումարի Հայկազնեայ» տումարական ժողովածուն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Ա, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 58-97 (համահեղինակությամբ Ռ. Հ. Վարդանյանի):
2. Հովհաննես Սարկավագ Իմաստասեր (գլխամանկավարժական աշխատանքների քննություն. դասավանդման մեթոդիկա), ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Հայ աստվածաբան, Բ, Եր., ԵՊՀ հրատ., 2008, էջ 189-211:
3. Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Զ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 48-85: Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, Է, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 49-57:

անչվող պատմական իրադարձություններին ու խաչակրաց արշավանքներին, մի դեպքում՝ իբրև այդ իրադարձությունների մասնակից, մյուսում՝ ժամանակակից, երրորդ դեպքում էլ հանդես է եկել՝ իբրև Եվսեբիոսի «Եկեղեցական պատմության» մեկնիչ:

Ինչպես վկայում է Հովհաննես Սարկավագի վարքագիրը, իր դպրոցում Սարկավագն ուսուցանել է նաև թվաբանություն, և, բնականաբար, պետք է ունենար դասագիրք, և այն, հավանաբար, եղել է «Յաղագս անկիւնավոր թուոց»ը:

Հովհաննես Սարկավագի ստեղծագործական ժառանգության կարևոր մասն են կազմում աստվածաբանական երկերը, որոնցում անդրադարձել է քրիստոնեական աստվածաբանության թե՛ տեսական, թե՛ գործնական խնդիրներին:

Գլուխ Բ

Հովհաննես Սարկավագի «Մեկնություն տումարիս Հայկազնեայ»-ն:

Այս գլխում հիմնավորել ենք, որ նախորդ ուսումնասիրողները թյուր պատկերացում են ունեցել Հովհաննես Սարկավագի տումարական ժառանգության վերաբերյալ՝ առանձին բնագրերը ներկայացնելով իբրև առանձին աշխատություններ, որոնք գրվել են տարբեր ժամանակներում, այն դեպքում, երբ դրանք միևնույն տումարական ժողովածուի մասերն են:

Հովհաննես Սարկավագն ստեղծել է տումարական ժողովածու, ինչի հիմնավորումն առկա է հենց իր բնագրերում: Հովհաննես Սարկավագն իր բնագրերը բնութագրում է իբրև մատենան՝ գրելով «...Մինչև ի գիր մատենիդ...», «Եւ ժողովին ի թուականացո, որ յելիցն Ադամայ ի դրախտէն աւուրք իբրև չորից ամաց սակաւ ինչ կամ նուազ, կամ աւելի մինչև ի գիր մատենիդ»:

Սարկավագի տումարական ժողովածուի ընդհանուր վերնագիրը եղել է «Մեկնություն տումարիս Հայկազնեայ»:

Ժողովածուն ստեղծվել է հայոց տումարի բարեփոխությունն իրականացվել է 1094 թվականին, որը հիմնավորել ենք իր բնագրերով:

Բնագրերի բովանդակությունը ակնհայտորեն ցույց է տալիս, որ Հովհաննես Սարկավագի ժողովածուն կազմվել է հայոց և տարբեր ազգերի տումարների տեսական խնդիրների մեկնության ու գործնական կիրառության միտումներով:

Դժվար է վերջնականորեն ասել, թե ժողովածուի մասերը նախնական բնագրում ինչ հաջորդականություն են ունեցել, որովհետև այդ մեկնությունները կարող էին լինել ինչպես «Պատճեններին» կամ Շ-եակ Զատկացուցակներին կցված, այնպես էլ՝ առանձնացված:

Հովհաննես Սարկավագի տումարական ժողովածուի մեկնողական մասն սկսվում է «Յաղագս Շ.եկի» ենթավերնագիրը կրող բնագրով, որի պատճառով տեսական բնույթի բնագրերը դրվել են տեսական հատվածում:

Ընդհանուր՝ «Յովհաննու արարեալ մեկնութիւն, որ մականունն Սարկաւագ կոչի» անվանված բնագիրը պետք է ունենար «**Վասն հալկազնեան տանից տարեկանաց շրջաբերութեան տումարիս**» ենթավերնագիրը, որտեղ Սարկավագը՝ Ա. մեկնում է հայոց տումարին բնորոշ հայոց ամիսների անշարժությանն և տոների շարժականությանը վերաբերող խնդիրը:

Բ. Սարկավագը շատ հստակ է ներկայացնում, որ մեր տումարի համար նահանջ տարում մեկ օր ավելացնելը Աւելեաց օրերի վրա, ինչպես որ երբայեցիների մոտ է, հարմար չէ, չի աշխատել և անշարժ տումարը կարգելիս չէր կարող իրեն հակասելով, նահանջ տարվա ավելացած մեկ օրն հավելել հայոց տումարի աւելեաց օրերին:

Գ. Բնագրի մի զգալի հատված նվիրված է երբայական տոների մեկնությանը, քանզի դրանց հիման վրա են ձևավորվել հայոց քրիստոնեական տոները:

Դ. Այստեղ Սարկավագը ոչ միայն ամսաթվերով, այլև շաբաթվա օրերով հաստատագրում է հայոց տոնական օրերի ճիշտ լինելը և հերքում է քաղկեդոնականների սկզբունքները:

Ե. Այս բնագրում Սարկավագը պարզաբանում է հայոց շարժական և մյուս ազգերի անշարժ տումարների տարբերությունը՝ հայոցի պարբերականությունը կապելով ոչ թե նահանջների (քառամյա), այլ 1460-ամյակի հետ, միաժամանակ ակնարկելով հասարակածը՝ գարնանային օրահավասարը, իբրև պարբերաշրջանի սկիզբ:

Զ. Հետևելով Անանիա Շիրակացուն՝ գտնում է, որ տումարական արվեստի հիմքում պետք է դնել երբայական համակարգը: Հովհաննես Սարկավագը տումարական հաշվումներ կատարելիս առաջնորդվել է երբայական թվականության համակարգով, և տումարի մեկնությունից հասկանալի է դառնում, թե ինչու է ինքը արարչության թվականության բազմաթիվ համակարգերից նախընտրել երբայեցուցը. երբայական տումարում արդեն հաշվի էին առնված և՛ Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը, և՛ համապատասխանությունը տարվա եղանակների ու կենդանակերպերի հետ:

Բնագիրն անչափ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում հրեական Զատկի մասին՝ վերջինս կապելով Քրիստոսի Խաչելության տարվա հետ:

Է. Մեկնության հեղինակը բացատրում է, թե ինչու է էսայան պարբերաշրջանը կատարյալ՝ «*Եւ բոլոր ասի, զի սպարտած ոչ ունի՝ ո՛չ սկիզբն և ո՛չ վաղճան, զարդն անտյ՝ անեզր բոլորեալ*»:

Հարկ է նշել, որ հիշյալ բնագրի օրգանական շարունակությունն է «**Նորին Յոնաննու**» վերնագիրը կրող հատվածը, որը երբայեցիների, հռոմոց ու հայոց ամիսների գուգընթացության մասին ունեցած տարակարծությանն է վերաբերում (մարտը = մեհեկանին, մետասան արեգ = ԻԲ ադար և այլն):

Ըստ էության, հիշյալ բնագրերը Սարկավագի նախնական ժողովածուի մեջ կազմել են մեկ ամբողջություն կամ իրար շարունակություն: Ի դեպ,

Սարկավագադիր տումարի հայոց շարքում «ՎԵՐԱԴԻՐ» համակարգը՝ 16, 27, 8, 19, 30, 11, 22, 3, 14, 26, 7, 18, 29, 10, 21, 2, 13, 24, 5, ցույց է տալիս Լուսնի հասակը Քաղոց 28-ին, հռոմեական տումարով՝ հունվարի 5-ին՝ սկսելով ապրիլի 4-ի լրման տարուց, որով ապացուցվում է, որ Սարկավագադիր տումարի տարեսկիզբը՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան օրն է՝ Քաղոց 29-ը:

Սարկավագն իր ստեղծած կանոններով՝ 532-ամյա նոր պարբերաշրջանի համար օգտագործում է «ՅՈԹՆԵՐԵԱԿի» նոր համակարգ՝ 2, 3, 4, 5/6, 7, 1, 2, 3/4, 5, 6, 7, 1/2, 3, 4, 5, 6/7, 1, 2, 3, 4/5, 6, 7, 1, 2/3, 4, 5, 6, 7/1 արժեքներով:

Նահանջ տարիները, մեկ օր ավելանալու հետևանքով, ունենում են 2 «ՅՈԹՆԵՐԵԱԿ»՝ մեկը դեկտեմբերի 31-ին համապատասխանող հայոց ամիս-ամսաթվից՝ Քաղոց 23-ից մինչև փետրվարի 28-ին համապատասխանող՝ Մեհեկի 22 -ն ընկած հատվածի համար, իսկ մյուսը՝ դրանից հետո՝ մինչև դեկտեմբերի 31՝ Քաղոց 23 -ն ընկած օրերի համար:

Սարկավագն իր տումարական ժողովածուի մեջ օգտագործելով արարչության և քրիստոնեական թվականության տարբեր համակարգեր՝ արարչության 1 թվականը փորձել է կապել Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի 1-ին տարվա լրման օրվան՝ ապրիլի 4-ին՝ իբրև Աստվածաշունչ մատյանով հաղորդված և կարևորագույն իրադարձություններով հաստատագրված լրման օր: Իր օգտագործած ու մեկնած արարչության թվականների մի մասը գալիս է վաղ շրջանից, իսկ մյուս մասը տեղայնացած թվականներ են, որոնք կիրառվել են մեզանում՝ համապատասխանեցվելով հայոց Շ-եակի երկու սկիզբներին՝ ապրիլի 13-ի և ապրիլի 4-ի լրման տարիներին:

Հովհաննես Սարկավագը «զագնուականոնսն» ասելով նկատի է ունեցել ինչպես Շ-եակ Զատկացուցակները, այնպես էլ՝ «Ազգաց կանոնները» և իր ստեղծած «Պատճենները»:

«Ազգաց կանոններում» «ՎԵՐԱԴԻՐ»-ները ամսվա կտրվածքներով միանգամայն համապատասխանում են Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի «ՎԵՐԱԴԻՐ»-ների համակարգին, իսկ 1094 թվականի՝ ապրիլի 4-ի լրման տարում այն 11 (16) է:

«Ազգաց կանոններում» Սարկավագը համադրել է 15 ազգերի տումարները: «Ազգաց ազնվականոններում» Սարկավագն առաջնորդվել է հուլյան տումարի կառուցվածքով, թեև իր տումարի սկիզբը հունվարի 6-ն է:

Սարկավագի խմբագրության արդյունք են ամիս-ամսաթվերի համապատասխանությունը կենդանակերպերին և որոշակի աստղերի մասին տեղեկությունները:

Եզիպտացոց խմբի համար հուլարի ԻԵ = մեքիր Լ-ի դիմաց պետք է ավելացնել՝ «Եզիպտացիքցիք զար նահանջին աստ դնեն»՝ նկատի ունենալով, որ այս խմբի մյուս ազգերն էլ են նույն տեղում ավելացրել նահանջները:

հեղինակային է: Հարկ է նշել, որ երբայական «Պատճենի» հետ միասին պետք է լինեին նրա խմբի մեջ մտնող Արաբացուց և Մակեդոնացուց «Պատճենների» համառոտած տարբերակները:

Նախորդ շրջանում Անանիա Շիրակացին տվել է Եգիպտացուց և Եթեոպացուց «Պատճենները», իսկ Մարկավագն ավելացրել է Աթենացուց, Բիթանացուց, Կապադովկացուց, Վրաց և Ադուանից «Պատճենները»՝ դարձնելով «Պատճեն տոմարի Է ազգաց»:

Մարկավագն է հեղինակել հռոմեացուց վերադրով և յոթներյակով ամենայն ազգացը գտնելու կանոնները:

Թիվ 1973 ձեռագրում «Պատճեն տոմարի»-ում Մարկավագը հայոց Մեծ (1-ին և 2-րդ շրջապտ.) և Փոքր թվականների համար գուգահեռաբար տվել է տարվա կարևորագույն հիմնակետերի կանոնները: Նրա ստեղծածն են գարնանամտի, ամառնամտի, աշնանամտի ու ձմեռնամտի, Յիսնակամտի կանոնները:

Նա է սահմանել Յայտնութեան, Աստվածածանի Մուրբ խաչի կանոնները: 1973 թվահամարի գրչագրում Մարկավագի նախօրինակից են պատճենված նաև հետևյալ հատվածները՝ «Արգի ԺԲ գարնանամուտ է հանապազ: Մարգաց ԺԳ ամառնամուտ է հանապազ: Հոռի Թ աշնանամուտ է հանապազ: Քառոց Ժ ձմեռնամուտ է և ի ԻԹ յայտնություն է: Մեհեկի Ը տեառնընդառաջ է: Տրեի Ժ յիսնակամուտ է յայտնութեան: Մահմի Ա և Թշրին ԻԳ և հոկտեմբերի ի Ժ յոլութին է Եղիսաբեթի: Եւ երեսուն արեգ ամսոյ և յապրիլի Է և նիսան ի ԺԷ աւետիք է կուսին Մարիամու: Նաասարդի Ե, յազոստոսի ի ԺԵ՝ տան Մարիամու աստուածածինի: Հոռի Ե, սեպտեմբեր ԺԴ՝ տան սրբոյ խաչին» և «Ի նահանջի ամի ամիսն մեհեկանի ԼԱ լինի և յաւելու Է [երեակ] թիւ մի, որպէս այլոց ազգաց»:

Թիվ 1999 գրչագրի «Պատճեն տոմարի ըստ հայոց եղանակաց» վերնագիրը կրող բնագրի ստեղծողը Հովհաննես Մարկավագն է: Նա է խմբագրել Ե-եակի 2-րդ շրջապտույտի՝ հայոց շարժական տոմարի ամիսների շարքը և դրանց համապատասխան հետևյալ կանոնները՝ գարնանային հասարակած - Նաասարդի (21), Անկաստեղ - Հոռի (16), Ելաստեղ - Մահմի (26), ամառնամուտ-Տրե (22), Աստուածածին - Արաց (19), Մուրբ խաչ- Մեհեկի (19), աշնանային հասարակած - Մեհեկի (23), ձմեռամուտ - Մարերի (24), Բարեկենդան Աստուածայտնութեան - Մարգաց (5), Յայտնութին - Մարգաց (13):

«ՏԱՆՈՒՏԷԸ» տոմարական իրողությունը իր ներմուծածն է հայոց տոմար, և այն տարբերվում է հուլյան տոմարի «ՏԱՆՈՒՏԷԸ» «-երի համակարգից, ինչը թելադրված է մեր տոմարական տարվա առանձնահատկությամբ՝ 12 x 30 + 5:

Երբայական Աւելեաց ամսի մոտ հայոց Արեգ ամսի 9-13-ին՝ «արարչութեան աւուրցն աստեղք»-ի անվանումները գուգադրողը հաստատապէս եղել է Հովհաննես Մարկավագը:

Մարկավագը փաստում է նաև, որ Հայկյան շրջանի սկիզբը գարնանային օրահավասարն է:

անվերնագիր՝ «Ըստ երբայեցուց հնագիտաց և մարգարեից ոմանց...» սկսվածքով բնագրի պատաստիկն իր բովանդակությամբ նախորդների շարունակությունն է:

Այստեղ էականն այն է, որ Արեգ ամիսն է գուգադրված գարնանային օրահավասարին: Փաստորեն, այս պատաստիկում նա հստակորեն խոսում է իր ընդունած տեսական տարեսկզբի մասին: Արեգ ամիսը ոչ միայն գարնանային եղանակի սկիզբն է, այլև ընդհանրապես ժամանակի:

Եվ սա համահունչ է Մարկավագի ընդունած թվականության՝ երբայեցուց համակարգին, քանիզի նրանց տարեսկիզբը համապատասխանում է մարտի 22 = Նիսանի 1 = Արեգ 14-ին:

«Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ գասկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակայից» («Զթուականն անուանեցելոյ...» սկսվածքով) վերնագիրն ունի հեղինակի մասնավոր խորհուրդը Մարգսին՝ գիտությանը հետևելու մասին:

Ե-եակի սկիզբը թեև, իրապես, ապրիլի 2-ը լրման տարի է եղել, որով առաջնորդվել են հռոմեացիները, սակայն ավեքսանդրացի իմաստասերները հինգհարյուրամյակը կարգելիս՝ պահպանելով ամբողջ 19-ամյակը, այն չեն ընդունել իբրև առաջին տարի, այլ ապրիլի 4-ի լրման տարին, «...քանզի հանապազ երկու թուով պակաս գտանին ո՛չ միայն աւուրք Լուսնին, այլ և վերադիրք, և նոքին ինքեանք լուսնացոյց կանոնք»:

Էսայանների համար 19-ամյակի սկիզբը ապրիլ 4-ից ընդունելն անհրաժեշտություն էր: Այստեղ հաշվի էին առնվել քրիստոնեական գաղափարախոսության սկզբունքային հարցերը՝ արարչության առաջին օրվա՝ մարտի 17-ի և մարդու ստեղծման՝ Նիսան 1 = մարտ 22-ի, ինչպես նաև Ելից, ինչպես և այլ աստվածաշնչային իրողությունների, և ի վերջո, Քրիստոսի Ծննդեան ու Խաչելութեան հետ կապված ավանդությունները:

Հովհաննեսն այստեղ արձարծում է նաև հարակայի խնդիրը: «Յաղագս ըստ հռոմոց ամսոց, և ԴԺ-երորդ լուսնոյ գասկաց, և փոփոխմանց իրաց, և անուանց և յարակայից» բնագրում նա ներկայացնում է վերադիրների փոփոխությունը: Ըստ Մարկավագի՝ թեպետ «չորեքսասաներորդն գասկաց»-ն ընդունվեց ճշգրիտ, բայց «երկու աւուրք ի քանակութենէ Լուսնին ի բաց կային»: Այս 2-ն է, որ Հովհաննեսն ավելացնում է նախկին վերադիր վրա՝ «...և երկուցն, գոր յաւելուք ի վերադիրսն յառաջինս»: Հայտնի է, որ Շիրակացու և Մարկավագի յուրաքանչյուր տարվա վերադիրների տարբերությունը 2 է: Հավանաբար, «յառաջինս» ասելով, Հովհաննեսը նկատի է ունեցել հենց Անանիա Շիրակացու վերադիրների համակարգը:

Ժամանակի ընթացքում փոփոխություններ են կրել նաև հարակաները (ԽԴ>ԽԶ): Ի դեպ, հարակայի մասին եղած հատվածը միակ ապացույցն է, որ բնագիրը պատկանում է Հովհաննես Մարկավագին: Այստեղ գրված է. «Այլ յաղագս յարակային, զի ոչ ԽԴ (44), այլ ԽԶ (46) ունիսք, ոչ յանդգնութեամբ ինչ գայս իմանալով, որպէս թե հակառակ իսկ սմանէ կանոնեցելոցն մի լիցի»: Լրման

կանոնի մեջ Սարկավազը տվել է հաստատունը՝ 46, իսկ մեկնության տարբեր մասերում բազմիցս բացատրում է դրա պատճառը: Հարական ԽԶ է ներկայացված նաև «Վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն» և «Յաղագս յարակայի, վերադրաց և թուպէից» վերնագիրը կրող բնագրում («Ապրիլ Դ(4), վերադիրն ԺԱ(11), և մարտ ԼԱ(31), բաղադրյալ թիւքն լինին ԽԶ(46), Մարտ ԲԴ(24), վերադիրն ԲԲ(22), նոյնպէս լինի ԽԶ(46)...»):

Անկասկած է, որ 19-ամյա պարբերաշրջանի մեկնության մաս է կազմել «Վասն երկուցն և չորիցն ապրիլիոս ամսոյ անմիաբանութիւն» վերնագիրը կրող բնագիրը, որը 19-ամյակի գատկական լրման առաջին տարին ապրիլի երկու և, թե՛ ապրիլի չորսը կանոնելու մասին է:

Բնագիրը Հովհաննես Սարկավագին պատկանելու հարցը հիմնավորվում է բնագրի տվյալներով՝ «Եւ զվերադիրադ լուսնոյ ծանեան հաստեաւ և փոփոխեցին զքառասուն և չորսն ի ԽԶ (46) և զվերադրացոյ զինն՝ ի մեսասան, ըստ որում և հնգեակն՝ հինգ և վեցեակն՝ վեց»: Այս գրված լավագույնս ապացուցում է նաև, որ «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն ժողովածու է, իսկ այս մասը գրել է մեկնելու համար իր կատարած փոփոխությունները:

«Յաղագս յարակայի, վերադրաց և թուպէից» վերնագիրը կրող բնագիրը օրգանական շարունակությունն է նախորդ գլխի, քանի որ նրա «Յաղագս թուպէից» անվանված մասն ավարտվում է վերոհիշյալ բացատրություններ խնդրողին ուղղված տողերով. «Ունեի և զբազումս և այլս գրել քեզ վասն դոցունց և այդպիսեացոյ իրաց, բայց արգելայ յանպարասութիւնէ, մանաւանդ՝ զի տայ զպատճառս իմաստնոց բաւական համարեցաք»: Այս հատվածից պարզվում է նաև, որ բնագիրն ուղղված է տումարի ուսուցման հարցերով շահագրգիռ մեկին: Սարկավազը ցույց է տալիս, թե ովքեր հարական կանոնել են 44, սխալվել են, քանի որ այդ դեպքում տարբեր տարիների Լուսնի լրումը եղել է զարնանային օրահավասարից առաջ կամ նույն օրը՝ մարտի 15-ին, 18-ին, 19-ին և 20-ին, ինչը լիովին հակասում էր Նիկիայի ժողովի սկզբունքներին:

«Յաղագս վերադրաց» մասում Սարկավազը տալիս է վերադիրների համակարգի օրինաչափությունները, որտեղ նշված է վերադիրների միջև եղած տարբերությունը՝ ԺԱ. «...գմետասան թիւսն յաւելումք ի վերադիրն»:

«Յաղագս թուպէից»-ը Սարկավագի խմբագրած կանոնն է. թուպէ բառը չկա Անանիա Շիրակացու մոտ: Հեղինակը խոսում է Լուսնի հասակը ամբողջովին՝ օրերով, թուպէներով ու մասերով, մասանց մասերով գտնելու խնդրի մասին: Նա համեմատության մեջ է դնում լուսնային ու արեգակնային ժամերն ու գրում. «Քանզի այսպէս համեմատելով հնգամսեայ լուսնական ժամքը, զարեգակնային ժամսն Լ (30) մասամբք ժողովել սովորեցաք»:

«Յաղագս յարակայից, վերադրաց և թուպէից» բնագրի հեղինակային նշումներից են՝ «Բայց ԽԶ վասն այնորիկ ասեմք...», «Ապրիլ Դ (4) վերադիրն ԺԱ (11) և մարտ ԼԱ (31), բաղադրեալ թիւք լինին ԽԶ (46)...», որոնք միանշանակորեն ապացուցում են, որ քննարկվող բնագիրը Հովհաննես Սարկավագինն է:

Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տումարական ժողովածուն ունեցել է պատվիրատու, ով, մեր կարծիքով, Հաղբատի առաջնորդն է՝ Սարգիս Առաջինը:

Կարծում ենք, որ տումարական ժողովածուն եղել է նաև տումարի դասագիրք: Հովհաննեսն է ԽԴ հարական խմբագրել ԽԶ (46), իսկ ապրիլ 4-ի լրման տարվա վերադիրը վերածել 11-ի ու դարձրել հնգեակի ու վեցեակի 1-ին տարի՝ Շիրակացու Ծ-եակի ապրիլ 2 լրման տարվա փոխարեն:

Կասկած չի հարուցում, որ «Պատճենները», «Թուական ազգաց և Ժամանակագրութիւն»-ը, «Ազգաց ազնվականոնները» («Խառնախորան»), «Լուսնացոյցը», «Ազնուականոնք ՇԼԲ – ամացը (հուլեան և հայոց անշարժ)»՝ միտված են լուծելու տումարի գործնական խնդիրները:

Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տումարական ժողովածուի գործնական-կիրառական մասը պետք է սկսեր նրա խմբագրած ու ստեղծած «Պատճեններով»: Իր իսկ տեղեկությամբ նա կազմել է «բովնդակ»՝ թվով 15 ազգերի տումարների «Պատճենները», եթե ոչ առանձին-առանձին, ապա համապատասխան խմբերով: Նախորդ շրջանից հայտնի ութ ազգերի «Պատճեններին» Սարկավազը հավելել է ևս վեցը. աթենացոց, բիթանացոց, կապադոկացոց, վրաց, ադուանից «Պատճենները»՝ Եգիպտացիների խմբում և Պարսից ու Տաճկացը՝ առանձին:

Տումարական ժողովածուում «Պատճենները» եղել են այն հաջորդականությամբ, ինչ հաջորդականությամբ նա «Ազգաց կանոններում» տեղադրել է ազգերի ամիս-ամսաթվերը՝ Հռոմոց և իւրոց, Եբրայեցոց և իւրոց, Եգիպտացոց և իւրոց, Հայոց, Պարսից և Տաճկաց, թեև «Ազգաց կանոններում» վերջինս բացակայում է:

«Պատճեն տումարի Հռոմայեցոց»-ում Սարկավագն է սահմանել 553 հաստատունը, և Հռոմացոց և հայոց փոքր թվականների տարբերությունը 304:

Աւագ լրման կանոններում երևում է Սարկավագի խմբագրությունը, իսկ հնգեակի և վեցեակի կանոններն ամբողջապես Սարկավագինն են. ապրիլի 4-ի լրման տարուց է սկսել հնգեակը և վեցեակը, այսինքն՝ վերադիրը 11 (ԺԱ):

Սարկավագի նախնական բնագրում Հռոմեացոց «Պատճենից» հետո, պետք է եղած լինեն այդ խմբի մեջ մտած «Հունաց և Ասորոց Պատճենները»՝ թերևս համառոտված տարբերակով: Հռոմեացիների «Պատճենի» տարվա եղանակների՝ «գարնանային, ամառնային, աշնանային, ձմեռնային», նրանցում եղած օրերի քանակների, նրանց համապատասխան կենդանակերպերի հատվածում Սարկավագի ավելացումը ամիսների ու կենդանակերպերի համապատասխանեցումն է:

«Պատճեն տումարի Եբրայեցոց»-ում Հովհաննես Սարկավագն է խմբագրել «թվականի, ելթներեակի, վերադրի և լրումն Զատկի» կանոնները, իսկ «Զուգաւորութիւն նոր հայոց եւ եբրայեցոց» կանոնն ամբողջությամբ

Ստեղծագործությունները հեղինակին ներկայացնում են իբրև համայնագետ իմաստասերի:

Գլուխ Բ

Հովհաննես Մարկավազի «Մեկնություն տումարիս Հայկազնեայ»-ն:

Հովհաննես Մարկավազի տումարական ժառանգությունը վերաբերում է տումարի թե՛ տեսական, թե՛ գործնական-կիրառական խնդիրներին:

Հովհաննես Մարկավազն ստեղծել է տումարական ժողովածու, ինչի հիմնավորումն առկա է հենց իր բնագրերում:

Բնագրային տեղեկությունները մեզ թույլ են տվել վերականգնելու այդ ժողովածուի վերնագիրը «Մեկնություն տումարիս Հայկազնեայ», որն ստեղծվել է 1094 թվականին: Այս ժողովածուի ստեղծումով էլ պայմանավորվում է Հովհաննես Մարկավազի տումարական բարեփոխության ժամանակը:

Ժողովածուն բաղկացած է եղել երկու մասից՝ տեսական-մեկնողական և գործնական-կիրառական:

Ժողովածուի «Յաղագս Շ. եկի», մեր կողմից՝ «Վասն տանից տարեկանաց շրջաբերութեան» անվանված, «Վասն հայկազնեան տումարիս նորին Հովհաննու» («Ասացաք յառաջագոյն»), «Ըստ եբրայեցոց հնագիտաց և մարգարէից ոմանց...» սկսվածքով, «Նորին Յովհաննու. Յաղագս իննետասներեկ ամացն» («Ի տգիտաց ոմանց...» սկսվածքով), «Պատճառ խանգարման Զատկին», «Պատմություն արքոյ Զատկին», «Յաղագս ըստ Հռոմոց ամաց ... («Զթուականէն անուանելոյ...» սկսվածքով), «Յաղագս եղանակաց...» («Վասն երկուցն և չորիցն ապրելիոյ ամսոյ անմիաբանութիւն...» սկսվածքով), «Յաղագս յարակայից» («Կարծեալք...» սկսվածքով) ենթավերնագրերով բնագրերը կազմում են ժողովածուի տեսական մասը:

«Յաղագս Շ. եկի»-ն տեսական մասի առաջին միավորն է, որտեղ տրված է ժողովածուի ստեղծման տարեթիվը՝ 1094 թ.-ին:

Հիմնավորել ենք, որ «Մեկնություն տումարիս Հայկազնեայ» ընդհանուր վերնագիրը կրող բնագրի ենթավերնագիրը եղել է «Վասն հալկազնեան տանից տարեկանաց շրջաբերութեան տումարիս»: Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ որոշ բնագրեր հստակորեն հաջորդել են միմյանց:

Անկասկած է, որ Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի մեկնության մաս է կազմել «Վասն երկուցն և չորիցն ապրելիոս ամսոյ անմիաբանութիւն» վերնագիրը կրող բնագիրը, որին հաջորդել է «Յաղագս յարակայի, վերադրաց և ըստից» հատվածը, որով էլ ավարտվել է ժողովածուի տեսական-մեկնողական մասը:

Հովհաննես Մարկավազն իր ժողովածուն կազմել է հայոց և տարբեր ազգերի տումարների տեսական ու գործնական խնդիրների մեկնության միտումով:

«Յաղագս յարակայի, վերադրաց և ըստից» բնագիրը կարելի է համարել Հովհաննես Մարկավազի «Մեկնություն տումարիս Հայկազնեայ» տումարական ժողովածուի տեսական-մեկնողական հատվածի վերջին միավորը:

Միջնադարյան տումարական գրականության մեջ առկա են մեծաքանակ «Պատճեն տումարի» անվանված բնագրեր, որոնք ոչ միայն արդեն իսկ իրենց ժամանակի տումարական տարբեր իրողությունների, անշարժ ու շարժական տոների, տարվա եղանակների, աստղագիտական երևույթների ստույգ կատարված հաշվումներն են, այլև այն կանոնների սահմանումը, որոնցով հնարավոր է ստանալ վերոնշյալ այս կամ այն տումարական իրողության ժամանակը՝ թե՛ շարժական և թե՛ անշարժ տումարներով:

«Պատճեն տումարի»-ն և դրա մեկնությունը կազմել է մեկ ամբողջություն:

Մարկավազի «Պատճենները»՝ հայոց և «բովանդակ», հայտնի են թիվ 1999, 1973 և բազմաթիվ այլ գրչագրերով. դրանց տրված են մեր ատենախոսության մեջ:

«Պատճենների» բնագրային տվյալներով հիմնավորել ենք ոչ միայն դրանց հեղինակային պատկանելությունը, այլև հաջորդականությունը՝ ըստ իր «Ազգաց կանոնների»՝ Հռոմոց և իւրոց, Եբրայեցոց և իւրոց, Եգիպտացոց և իւրոց, Հայոց, Պարսից, թեև հեղինակը, հետևելով Անանիա Շիրակացուն, նշում է, որ բոլոր տումարների հիմքը եբրայականն է:

Հռոմեականը կամ հույանն այն առանցքային տումարն էր, որի հետ հարաբերակցությամբ են արտացոլված ժամանակի հայտնի տումարները:

«Պատճեն տումարի Հռոմայեցոց» վերնագրի տակ ամփոփված որոշ կանոններ Հովհաննես Մարկավազի խմբագրության արդյունք են:

Ատենախոսության մեջ հիմնավորել ենք, թե պահպանված կանոններից որոնք են Մարկավազինը:

Նրանն են հայոց և հռոմեացոց փոքր թվականների կանոնները և ՇԼԳ (533) ու ՅԴ (304) հաստատունները:

Հարկ է նշել, որ վերադրի, յոթներյակի (ի տարբերություն հայոց Մեծ թվականի յոթներյակի՝ առաջնորդվում է բեսիքիստոնով՝ 28 ամյակով), Ասագ լրման կանոններում երևում է Մարկավազի խմբագրությունը (հաստատունը ԽԶ (46)), իսկ հնգեակի և վեցեակի կանոններն ամբողջապես Մարկավազինն են, քանի որ ապրիլի 4-ի լրման տարուց նա սկսել հնգեակը և վեցեակը, այսինքն՝ վերադրի 11 (ԺԱ), իսկ Անանիա Շիրակացու հնգեակի և վեցեակի 1-ին տարին ապրիլ 2-ի լրման տարին է, որտեղ վերադրի, բնականաբար, կլինի ԺԱ (11):

«Պատճեն Հռոմեացոց»-ին պետք է հետևելին հունաց և ասորաց «Պատճենները»:

Հետևելով Անանիա Շիրակացուն՝ Հովհաննես Մարկավազը «Պատճենների» հիմքը համարում է Եբրայեցոց «Պատճենը»: Թիվ 1999 գրչագրի՝ «Պատճեն տումարի Եբրայեցոց» վերնագիրն ունեցող բնագրում ևս Հովհաննես Մարկավազն ունի խմբագրություններ, հատկապես «թվականի, եյթներեակի, վերադրի և լրումն Զատկի» կանոններում, իսկ «Զուգադրություն նոր հայոց եւ եբրայեցոց» կանոնն ամբողջությամբ հեղինակային է: Հարկ է նշել, որ

Երբայական «Պատճենի» հետ միասին պետք է լինեին նրա խմբի մեջ մտնող Արաբացուց և Մակեդոնացուց «Պատճենների» համառոտած տարբերակները, քանի որ «Ազգաց կանոնների» մեջ առկա է «Երբայեցուց և իւրոց» սյունակը և զուգահեռ ամիս-ամսաթվերը, ինչպես և հետագա շարադրանքի մեջ բերված է «Արաբացուց եւ Մակեդոնացուց» ամիսների եւ կրկնակների աղյուսակը:

1973 թվահամարի երբայական «Պատճենի» մեջ հեղինակին է հետևյալ կանոնը՝ «Թուական երբայեցուց այսպէ՛ս արա. Կա՛լ ԲՊԲ (5824), զիայ թուականն ի վերա՛յ բեր, և է՛րթ զըջանան ՇԼԳ (533), ՇԼԳ (533), որ մնայ՝ թուական է երբայեցուց»: Այն հիմնավորվում է մեկնության մեջ արձանագրված ՌՊԲ (5824)-ով (արարչությունից մինչև հայոց թվականը), որին, ինչպես նշեցինք, հետևել է Հովհաննես Սարկավազը:

Սակայն այս «Պատճենում» առկա է նաև երբայեցիների մեկ այլ թվական՝ «Կալ ՅՄԹ (6299)»: Երբայական այս երկու թվականներն ունեն մեկ ընդհանրություն, այն է՝ երկուսն էլ ստեղծված են միևնույն տասնիննամյակի հենքի վրա, այսինքն՝ համապատասխանում են ապրիլի 13-ով սկսվող 19 ամյակին, որի 10-րդ տարին ապրիլի 4-ի լրման տարին է (5824 : 19 = 10 մն. և 6299 : 19 = 10 մն.):

Հովհաննես Սարկավազի նախնական բնագրում երբայական (արաբական և մակեդոնական) «Պատճենին» պետք է հետևեին «Պատճեն տումարի է ազգաց», այն է՝ Եգիպտացուց, Եթեպացուց, Աթենացուց, Բիթանացուց, Կապադովկացուց, Վրաց և Ադուանից, իսկ Պարսից ու Տաճկաց «Պատճենները», որոնք մասամբ առկա են 1999 թվահամարի 1-ին ժողովածուի մեջ, սակայն բացակայում են 1999 թվահամարի 2-րդ գրչագրում:

Սարկավազն ավելացրել է Աթենացուց, Բիթանացուց, Կապադովկացուց, Վրաց և Ադուանից «Պատճենները», որը երևում է Շիրակացու և Սարկավազի բնագրերի համեմատությունից, ինչպես և տվել է Պարսից և Տաճկաց «Պատճենները»:

1999 թվահամարի բնագրում, մինչև «Ազգաց կանոնների» աղյուսակները, առկա են Սարկավազի հեղինակած կանոններն ու աղյուսակները: Հեղինակային է վերադրվում յոթներեակը գտնելու կանոնը:

«Եգիպտացուց եւ իւրոցն» արտահայտությունը, ինչպես և հետագայում զուգահեռ բերված «ամիսք և կրկնակք Աթենացուց և Բիթանացուց, Կապադովկացուց և Եգիպտացուց, Եթովպացուց և Վրաց, Տաճկաց և Ադուանից» աղյուսակները ցույց են տալիս, որ նախապես Սարկավազը տվել է նրանց «Պատճենների» համառոտ տարբերակները: Այդ է հիմնավորում Սարկավազի հեղինակած՝ «Զթուական ազգաց» հատվածը:

Մեզ հասած «Պատճեն տումարի Հայոց»- ի տարբեր բնագրերում արտացոլված կանոնները վերաբերում են և՛ հայոց Մեծ թվականին՝ 1-ին ու 2-րդ շրջապատույտ, և՛ Սարկավազադիր անշարժ տումարին:

Ատենախոսության մեջ հիմնավորել ենք, որ թիվ 1973 և 1999 ձեռագրերում էլ պահպանված աղյուսակը, որով սկսում է «Պատճեն տումարի Հայոց»- ը,

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հովհաննես Սարկավազի կյանքի ու գործունեության մասին պահպանված սկզբնաղբյուրների տեղեկությունների, ինչպես և նրա ստեղծագործությունների, հատկապես, «Մեկնություն տումարիս Հայկազնեայ» տումարական ժողովածուի ուսումնասիրությունը մեզ բերել է հետևյալ եզրահանգումների:

Գլուխ Ա

Հովհաննես Սարկավազը ծնվել է մոտավորապես 1057 թվականին Փառիստում, եղել կուսակրոն քահանա-վարդապետ և երբեմն վարել անապատական կյանք: Նրա ուսուցիչը եղել է Գևորգ Ուռճացին:

1082 թվականին է Բարսեղ Անեցին դարձել փոխկաթողիկոս և մոտավորապես 25-ամյա Հովհաննեսին իր հետ տարել Անի:

1082-ից տարիներ հետո, մինչև 1091 թվականը դարձել է վարդապետ և ստանձնել Անիի վարդապետանոցի ուսուցչապետությունը:

Հովհաննեսը բազմիցս շրջագայել է ու շփվել տարբեր քաղաքակրթությունների հետ, ապա վերադարձել է Անի՝ իր հետ բերելով բազմազան գրական արժեքներ:

Կարծում ենք, որ նա Բարսեղ Անեցու գլխավորած պատվիրակության հետ 1091 թվականին գնացել է սելջուկների Մելիքշահ սուլթանի մոտ՝ Խորասան: Նույն տարում Հովհաննես Սարկավազը պատվիրակության հետ շարունակել է ուղևորությունը դեպի Ուռնա: Մինչև 1092 թվականը Բարսեղ Անեցու հետ գտնվել է Ուռնայում, և ճանաչել է կուրացված Ստեփանոս արքեպիսկոպոսին, ում էլ ուղղված է «Առ կոյր աչագեղոյն եւ լուսավոր» երկը:

1092/93 թթ.-ին Մելիքշահի մահը պատճառ է դարձել, որ կաթողիկոսի հետ շուտափույթ վերադառնա Անի:

1094 թ. կազմել է «Մեկնություն տումարիս Հայկազնեայ», տումարական ժողովածուն:

1110 թ. գրել է տումարական բովանդակությամբ նամակ՝ «Առ Սարգիս»:

Իր ստեղծագործություններում՝ «Առ Սարգիս. Ողբք» բանաստեղծության մեջ ծածկագրված և 1110 թվականին գրված «Առ Սարգիս» տումարական բովանդակությամբ նամակում հիշատակվող Սարգիսը Հաղբատի առաջնորդ Սարգիս Առաջինն է:

1113 թ. տեղի ունեցած Արևի խավարումը պատճառ է դարձել դրան նվիրված տումարական բովանդակությամբ բնագրի ստեղծման համար:

1116 թ. ևս ունի գրած նամակ անհայտ մեկին:

Հովհաննես Սարկավազը մահացել է 1130 թվականի փետրվարի 11-ին՝ «բարուք կացեալ ի ժիր մշակութեան»:

Հովհաննես Սարկավազի Ծ-եակ Ջատկացուցակը՝ ըստ հռոմեացուց տոմարի, երկրորդ անգամ հրատարակվել է Ջ. Էյնաթյանի և Գ. Տեր-Վարդանյանի աշխատասիրությամբ՝ 1999 զրչագրի հիման վրա:

Հովհաննես Սարկավազի՝ հրատարակված ՇԼԲ-ամյա Ջատկացուցակների համեմատական քննությունը տե՛ս խնդրին նվիրված մեր հոդվածում և ատենախոսության համապատասխան մասում:

Ուսումնասիրությունը մեզ բերել է այն համոզման, որ 1999 և 1973 զրչագրերով մեզ է հասել ոչ թե նախնական բնագիրը, այլ՝ արդեն խմբագրված տարբերակը:

Խմբագրված է «Յոթներեակի» համակարգը 20 թվականից սկսած, որի հիման վրա Ջ. Էյնաթյանը 1-19 տարիների յոթներեակներն է ուղղել և սկսել Գ-երեքշաբթի օրից, Բ-երկուշաբթի օրվա փոխարեն, այն դեպքում, երբ 532-ամյակում միայն այդ տարիներն են ճիշտ գրանցված եղել: 20-րդ տարուց սկսած յոթներեակները Սարկավազի համակարգով վերականգնելու փոխարեն, թողել է նույնը: Մենք վերականգնել ենք յոթներեակները՝ դնելով հենց իր կանոններով ստացված արժեքները:

Հայոց շաբթի համար օգտագործել է վերադիրների այլ համակարգ, որը կիրառվել է մեր նոր վերականգնության մեջ:

Մեր վերականգնած **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց»**-ներում տեղ են գտել հետևյալ շաբթերը՝ 1. **«Նահանջ»**, 2. **« Թուական»՝ Սարկավազադիր Հայոց անշարժ տոմարով**, 3. **«Թուականը»**՝ մենք ենք դրել, որի 1-ին տարին ներկա 1085 թվականն է, 4. **«Վերադիր»**, 5. **«Է-երեակ»**, 6. **«ՏԱՆՈՒՏԷԼ»**, 7. **«Աւր Յայնուրթեան»**, 8-9. **«Առաջադր»** և **«Քանիք»**, 10-11. **« Բուն Բարեկենդան»** և **«Քանիք»**, 12. **«Միջոց»**, 13-14. **«Լրումն»** և **«Քանիք»**, 15. **«Աւր լուման»**, 16-17. **«Ձատիկ»** և **«Քանիք»**, 18. **«Լ. Լրումն»**, 19-20. **«Պենտեկոստե»** և **«Քանիք»**, 21-22. **«Վարդավառ»** և **«Քանիք»**, 23. **«Միջոց»**:

Թիվ 1999 զրչագրում, ինչպես և 2-րդ հրատարակության մեջ առանձին 19-ամյակների աղյուսակների տակ բերված են յուրօրինակ տեղեկություններ, որոնք ներկայացված են մեր՝ տվյալ խնդրին նվիրված հոդվածում:

Հովհաննես Սարկավազի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուի նախնական բնագրում եղել է երկու Ծ-եակ Ջատկացուցակ, որոնց համար հիմք է ծառայել Ա. Շիրակացու հռոմեացուց տոմարով կազմած Ծ-եակը, որն էլ խմբագրել է Հովհաննես Սարկավազը և դրան համապատասխան ստեղծել 2 Ջատկացուցակ՝ մեկը՝ հռոմեական տոմարով, որը որոշ խմբագրումներով պահպանված ենք գտնում 1973 և 1999 թվահամարի և այլ զրչագրերում, մյուսը՝ հայոց անշարժ տոմարով, որը պահպանվել է միայն մեկ 19-ամյակի կտրվածքով, և մենք այն վերականգնել ենք: Մեր վերականգնած Ջատկացուցակները ներկայացված են Հավելված 1-ում:

Հովհաննես Սարկավազի ստեղծած ՇԼԲ – ամյա ազնուականոններով էլ առաջացավ հայոց Փոքր կամ Սարկավազադիր թվականը, որի Ա տարին 1085 թվականն է, և ավարտվում է 1616 թվականին:

հեղինակային է և ներկայացնում է հենց Հովհաննես Սարկավազ տոմարագետի ինքնատիպությունն ու նրա կատարած տոմարական բարեփոխություններից մի քանիսը: Նախ այս աղյուսակով է նաև հաստատվում, որ «ՏԱՆՈՒՏԷԼ» տոմարական իրողությունը նրա ներմուծածն է հայոց տոմար, և այն տարբերվում է հուլյան տոմարի «ՏԱՆՈՒՏԷԼ»-ի համակարգից, ինչը թելադրված է մեր տոմարական տարվա առանձնահատկությամբ՝ 12 x 30 + 5, այն է՝ ինչպես հայոց տարին ունի 13 ամիս, որոնցից 12-ին 30 աստիճանով համապատասխանում են մեկական կենդանակերպ՝ սկսած «ԽՈՅ» ից, այնպես էլ՝ Աւելեաց ամսին համապատասխանում են հինգ մոլորական կոչվող աստղերի անվանումները, որոնց հանդիպում ենք ինչպես թիվ 1973 զրչագրում, այնպես էլ 1999՝ «Պատճենի»՝ Սամուել Անեցու խմբագրության մեջ:

Այդուհետև, մենք այստեղ գտնում ենք մեր այն տեսակետի հաստատումը, որ թեև Սարկավազի «Ազգաց կանոններում» հայոց Նաւասարդ ամսի 1-ը զուգադրված է օգոստոսի 11-ին կամ «Ազգաց կանոնները» կառուցել է հուլյան տարվա համապատասխան՝ Քաղոց 29 = հունվարի 6 զուգակցությամբ, սակայն իր համար իրական-տեսական տարին՝ երրայական տարին է՝ համապատասխան բնատնտեսական տարվան, որն, ըստ իր «Ազգաց կանոնների», սկսում է Արեգ 12 – մարտի 20 զուգակցությամբ՝ «ԽՈՅ» կենդանակերպով, այն է՝ զարուն եղանակով: Ահա այդ է պատճառը, որ կազմելով հայոց կրկնակների համակարգը, նա աղյուսակում հայոց ամիսները՝ սկսած Նաւասարդից, զուգադրել է ոչ թե հուլյան տոմարի ամիսներին, այլ «ՏԱՆՈՒՏԷԼ»-երին, այսինքն՝ կենդանակերպ-համաստեղություններին (Նաւասարդ = «ԽՈՅ»), որոնք այն անշարժ հենքն են ու ժամանակացույցը, որոնց կարող են համապատասխանել տարբեր ազգերի տոմարների այս կամ այն ամիսները: Միաժամանակ նա «ՏԱՆՈՒՏԷԼ»-երի կողքին է դրել նույն կրկնակների համակարգը, որով էլ նույնացրել է հայոց ամիսներն ու «ՏԱՆՈՒՏԷԼ»-երը: Հայոց ամիսների ու «ՏԱՆՈՒՏԷԼ»-երի զուգադրությամբ Սարկավազն ամրակայում է նաև, որ Հայկյան շրջանի սկիզբը ևս զարնանային օրահավասարն է կամ իր ապրած ժամանակներում ընդունված «ԽՈՅ» կենդանակերպը, որին զուգադրված է Հայոց Նաւասարդ ամիսը:

Թեև թիվ 1973 բնագրի հրատարակության մեջ բացակայում է, սակայն 1999 թվահամարի զրչագրի «Պատճեն տոմարի Հայոց Սարկավազին» բնագրում պահպանվել են այն հիմքերը, այն է՝ սահմանումները, որոնցով ապացուցվում է, որ այս աղյուսակների հեղինակը հենց ինքը Սարկավազն է:

1999 թվահամարի զրչագրում հեղինակային է Գոտիք Արեգականի կանոնը:

Մեր հաշվումները ցույց են տալիս, որ կանոնում, Բ (2) թվով պակասը պետք է ուղղել Բ (2) թվով ավել՝ ճշգրիտ համակարգ ստանալու համար:

Հովհաննես Սարկավազի «Պատճեն տոմարի»-ի աղյուսակին հաջորդում են «Կրկնակի», «Կիսակի», «ՏԱՆՈՒՏԷԼԻ» գործնական սահմանումները: «ՏԱՆՈՒՏԷԼ»-ն ինքն է ներմուծել հայոց տոմար: Որ հեղինակային է

«ՏԱՆՈՒՏԷՆԴ» գործնական սահմանումը, առաջին հերթին երևում է նրանից, որ երկու կտրվածքով է տրված՝ մեկը՝ սկիզբը «ԽՈՅ»-ից, իբրև տեսական տարեկալիզ, մյուսը՝ «ԱՌՅՈՒԾ»-ից, քանի որ իր «Ազգաց կանոններում» Նավասարդի 1-ը համապատասխանում է «ԱՌՅՈՒԾ»-ին:

«ՏԱՆՈՒՏԷՆԴ» հայոց Մեծ թվականով գտնելու կանոնի մեջ Սարկավագի խմբագրությունը 5 թիվ հանել է կամ 7 թիվ գումարելը, որը համարժեք է հայոց Մեծ թվականին 551 գումարելու և ներկա թվականն ստանալու ու դրանցով ևս «ՏԱՆՈՒՏԷՆԴ»-երը գտնելու կանոնին: Այսպես, ըստ Սարկավագի, Արևի խավարումը տեղի է ունեցել 562 հայոց Մեծ թվականին, որին գումարելով 7 կամ հանելով 5, մնացորդում կստանանք 5, որն «ԱՌՅՈՒԾ» է:

Սարկավագին են «Թուական այսպե՛ս արա.Ի մեծ թվականն ՇԼԳ (532) ի բա՛ց երթ՝ փոքր է:

Դարձեալ կալ յերեքտասանն մարգաց ամսոյ, թուեա մինչև ցայտնութին, չորեքատկեալ՝ նոր թուական է: Թէ յառաջին ամի ես՝ Գ (3) երթ, եթէ երկրորդին՝ Բ (2)՝ կանոնները:

Հայոց Շ-եակի ՇԼԲ հաստատունը ՇԼԳ է խմբագրել Հովհաննես Սարկավագը՝ 1004 թվականին Հայկյան պարբերաշրջանի 1460-ամյակի ավարտի հետևանքով ավելացած 1 տարին ավելացնելով, իսկ կանոնի մյուս հատվածը վերաբերում է հայոց Շ-եակի 2-րդ շրջապտույտին, երբ 1-ին քառամյակում Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոներ համապատասխանել է Մարգաց 13-ին և կանոնի համաձայն ստացել են համապատասխան թվականները:

Սարկավագից վերցված՝ վերադրի կանոն է պահպանվել Հովհաննես գրչի ընդօրինակության մեջ: Նա գրում է. «Յետ այսր գրեցից և զառանց նահանջիցն ըստ դրութեան մեծին Սարկավագի, համատաւտ և դիւրին գուգադրութեամբ»:

«Վերադրի այսպե՛ս արա. Կա՛ լ զթվականդ և ե՛րթ ԺԹ (19), ԺԹ (19), մնացեալն մետասնապատկեա, Դ (4) թիւ ի բաց հան, և զայլն երթ Լ (30), Լ (30). որ մնայ՝ վերադրի է: Բայց ի նահանջից նահանջ Գ (3) ե՛րթ զարակայր:

Դարձեալ կա՛ լ զվերադրին հոռովմին, Ե (5) ի վերայ ած, և այն է»:

Ատենախոսության մեջ 19 տարիների հաշվարկով ցույց ենք տվել, որ տարբեր գրչագրերում պահպանված հայոց վերադրիները՝ 1. Արեգի ԻԷ - ԺԶ(16) , 2. Արեգի ԺԶ - ԻԷ, 3. Ահեկի Ե - Ը (8), 4. Արեգի ԻԴ - ԺԹ (19), 5. Արեգի ԺԶ - Լ (30), 6. Ահեկի Բ - ԺԱ (11), 7. Արեգի ԻԱ - ԻԲ (22), 8. Ահեկի Ժ - Գ (3), 9. Արեգի ԻԹ - ԺԴ (14), 10. Արեգի ԺԷ - ԻԶ (26) , 11. Արեգի Զ - Է (7), 12. Արեգի ԻԵ - ԺԸ (18), 13. Արեգի ԺԴ - ԻԹ (29), 14. Ահեկի Գ - Ժ (10), 15. Արեգի ԻԲ - ԻԱ (21), 16. Ահեկի ԺԱ - Բ (2), 17. Արեգի Լ - ԺԳ (13), 18. Արեգի ԺԹ - ԻԴ (24), 19. Ահեկի Ը - Ե (5)) Սարկավագին են:

Սարկավագն է Շ-եակի 2-րդ պարբերաշրջանի 10-րդ տարվա վերադրիը խմբագրել 11՝ հռոմեացոց շարքի համար, իսկ հայոց համար՝ 16:

Սարկավագադրի տոմարում վերադրիների համակարգը ցույց է տալիս Լուսնի հասակը Քաղոց 28-ին, հռոմեական տոմարով՝ հունվարի 5-ին, իսկ իր Սարկավագադրի տոմարի հայոց շարքի տարեմուտը Քաղոց 29-ն է՝ հունվարի

ատենախոսության մեջ, ասենք, որ Հովհաննես Սարկավագը առաջին հերթին և է, որ Անանիա Շիրակացու ստեղծած 550-ամյա Չատկացուցակի ավարտից հետո ստեղծեց 532-ամյա Չատկացուցակներ 2-րդ շրջապտույտի համար, որով հիմք դրվեց հայոց Փոքր թվականին՝ սկսելով ներկա 1085 թվականից:

Նախկինում ուսումնասիրողները մտածել են, որ Սարկավագն ստեղծել է ՇԼԲ-ամյա Չատկացուցակ միայն հռոմեացոց տոմարով, սակայն տոմարական բնագրերում պահպանված որոշ գրանցումներ, մեզ թույլ են տվել հիմնավորելու, որ եղել է նաև ՇԼԲ-ամյա Չատկացուցակ՝ հայոց Սարկավագադրի անշարժ տոմարի ամիս-ամսաթվերով:

Այսպես, թիվ 1973 գրչագրում (էջ 53 բ, ինչպես նաև 79 ա), պահպանվել է 19-ամյա պարբերաշրջանի մի աղյուսակ, որտեղ տրված են Առաջավորը, Բուն Բարեկենդանը, վերադիրները և լրման օրերը, որոնց ամսաթվերը ցույց են տալիս, որ այն Հովհաննես Սարկավագի կազմած 19-ամյակն է: Այն սկսում է ապրիլի 4-ի = Արեգի ԻԷ-ի տարով և ավարտվում ապրիլի 15-ի = Ահեկի Ը-ի տարով: Իսկ ամենակարևորը՝ այստեղ տրված են նաև հայոց վերադիրները:

Ինչպես երևում է աղյուսակից Արեգի ԻԷ - ապրիլի 4-ի լրման տարում վերադիրը 16 է, այսինքն՝ Սարկավագը հայոց Փոքր թվականի համար հռոմեական տոմարի 11 արժեքին ավելացրել է 5, ինչպես կանոնել է: Այդպես է նաև 19-ամյակի բոլոր տարիներին, բացի Արեգի ԺԷ - մարտի 25 -ի լրման տարուց, որտեղ դրանց տարբերությունը 6 է: Լուսնի լրման 19-ամյակի բոլոր տարիներին վերադիրների տարբերությունը 11 է, իսկ վերջին տարվանը՝ Արեգի ԺԷ - մարտի 25-ինը՝ 12, ինչպես հռոմեական տոմարում:

Լուսնի լրման այս 19-ամյա պարբերաշրջանի, բեսիքիստոնի՝ Արևի փոքր շրջանի, այն է՝ 28-ամյա պարբերաշրջանի, ու «Ազգաց կանոնների» հենքի վրա, վերադիրների ու յոթներյականների Սարկավագադրի շարքերով է ստեղծել Հովհաննես Սարկավագն իր ՇԼԲ-ամյա Չատկացուցակները, որոնք մենք ենք վերականգնել:

Հովհաննես Սարկավագի տոմարական՝ «Մեկնություն տոմարի Հայկազնեայ» ժողովածուի Շ-եակ աղյուսակներից մեկի վերնագիրը վերականգնում ենք **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հռոմեացոց տոմարի»**, իսկ մյուսը՝ **«Ազնուականոնք ՇԼԲ ամաց՝ ըստ հայոց անշարժ տոմարի (Սարկավագի)»**:

1973 թվահամարի գրչագրում առկա է Շ-եակի՝ հայոց ամիս-ամսաթվերով միայն մեկ 19-ամյակ, որով հեշտությամբ վերականգնվում է հայոց ամիս-ամսաթվերով Շ-եակը, որովհետև այն 19 x 28-ի արտադրյալի թիվն է:

Հովհաննես Սարկավագի հուլյան տոմարով Չատկացուցակն ունեցել է երկու հրատարակություն՝ երկու տարբեր գրչագրերի հիման վրա: Առաջինը հրատարակել է Ա. Աբրահամյանը՝ հիմք ունենալով թիվ 1973 գրչագիրը, որին որոշ («Վերադիր», «Յոթներեակ», «ՏԱՆՈՒՏԷՆԴ») ավելացումներ է կատարել թիվ 1999 գրչագրից:

Հովհաննես Մարկավազը տարբեր ազգերի՝ ժամանակի հայտնի արարչության թվականներն արտահայտել է հայոց Շ-եակի՝ հաշվման իմաստով 1-ին՝ ապրիլի 13-ի լրման, և 10-րդ՝ ապրիլի 4-ի լրման, տարիներով՝ արարչագործության կիրառական թվականների 1-ին տարիները համապատասխանեցնելով այդ սկզբունքին:

Արարչության քննարկված թվականների մի մասը գալիս է վաղ շրջանից, իսկ մյուս մասը տեղայնացած թվականներ են, որոնք կիրառվել են մեզանում՝ համապատասխանեցվելով հայոց Շ-եակի երկու սկիզբներին:

Մանրամասները տես մեր վերջին հոդվածում:

Հովհաննես Մարկավազի «Մեկնություն տոմարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի կարևորագույն մասերից են «Ազգաց կանոնների» կամ «Ազգաց ազնվականոնների» աղյուսակները*, ինչի մասին վկայել է հեղինակը ինչպես «Յաղագս ամսոց հայոց և տօնից և յաղագս ԴԺ-աներորդաց լուսնոյ գատկի» բնագրում, այնպես էլ հետագայում գրած նամակներում:

2068 թվահամարի գրչագրի «Ազգաց կանոններն» ունեն հետևյալ խորանները՝ Վերադիր Հռոմոնց, Կիսակք Լուսնի, Է-երեակ Հռոմոնց, Շաբաթագիր, Հռոմոնց և իւրոց, Եբրայեցոց և իւրոց, Եգիպտացոց և իւրոց, Ամիսք Հայոց (Մարկավազին), ամիսք Պարսից, որտեղ տրված են միայն ամսաթվերը:

Շարունակության մեջ մյուս խորաններն են՝ Տանուտերք արուրց շաբաթու, Այբուբենքն արեգական, Գիր աստիճանաց արեգական, Գօտիք արեգական, Աստիճան արեգական, Հոլովք արեգական, Ասպարեզք արեգական և Տիւ (ժամ[ք] տունջեան և մասունք), գիշեր (ժամք գիշերոյ և մասունք): Նախօրոք տրված հոդվածում և ատենախոսության մեջ մանրամասնորեն բերված է այդ խորանների և աջակողմյան խորանի քննությունը:

Վերականգնել և ճշտումներ ենք կատարել «Ազգաց կանոնների» աջակողմյան համարյա բոլոր ամիսների աղյուսակներում:

Հովհաննես Մարկավազի կազմած ազնուականոն «Ազգաց կանոնները» կոչվել են նաև «Խառնախորան»: «Ազգաց կանոնները» տրված են 1094 թ-ի կամ հայոց Փոքր թվականի 10-րդ տարվա կտրվածքով: Մեզ է հասել ուշ շրջանի ընդօրինակություններով, իսկ 1999 թվահամարի գրչագիրը նրա համառոտված տարբերակն է: Մեր վերականգնած «Ազգաց կանոնները» տե՛ս Հավելված 2-ում:

Հովհաննես Մարկավազի տոմարական ժողովածուի գործնական մասի կարևորագույն բաղադրիչը ՇԼԲ-ամյա Ջակտացուցակներն են՝ հռոմեացոց և հայոց անշարժ տոմարներով:

Չմանրամասնելով Շ-եակ Ջատկացուցակների ստեղծման պատմությունը և դրանց արմատավորմանը հայ իրականության մեջ, որը կարող էք գտնել մեր

* Վերականգնությունը տե՛ս Հավելված 2:

6-ը՝ Քրիստոսի Ծննդեան ու Յայտնութեան տոնի օրը, որը հայոց եկեղեցական տարվա սկիզբն է: Նշանակում է, որ Մարկավազադիր տոմարի գործնական տարեևուտը հունվարի 6 = Քաղոց 29 է: Թեև հայոց տոմարի 1-ին ամսի՝ Նասասարդի 1-ը համընկել է հռոմեական տոմարի օգոստոսի 11-ին, սակայն այն Մարկավազադիր տոմարի համար տեսական տարեևուտ է:

Պարզել ենք, որ Մարկավազի «Յոթներեակի» համակարգ 28-ամյա պարբերականությամբ ունի հետևյալ արժեքները՝ 2, 3, 4, 5/6, 7, 1, 2, 3/4, 5, 6, 7, 1 / 2, 3, 4, 5, 6/7, 1, 2, 3, 4/5, 6, 7, 1, 2 / 3, 4, 5, 6, 7/1:

Հեղինակային է Օրացյուտի կանոնը: Ցույց ենք տվել, որ հռոմեացոց ամիս-ամսաթվերով օրացյուտ անելիս անպայման պետք է 1 օր ավելացնել, այսինքն կանոնում նախապես եղել է՝ «կա՛լ թիւ մի», որը բաց են թողել, իսկ հայոցի համար օրացյուտի կանոնում պետք է վերականգնել «Ե (Ա) ի վերա՛ ամ» արտահայտությունը:

Ներկայացնենք Հովհաննես Մարկավազի բերած մյուս կարևոր նորությունները «Պատճենի» մեջ՝ ըստ 1973, ապա 1999 թվահամարի ձեռագրերի տվյալների, որոնք վերաբերում են թե՛ հայոց Մեծ թվականին, թե՛ իր ստեղծած տոմարին:

«Պատճեն տոմարի»-ում Մարկավազը հայոց Մեծ և Փոքր թվականների համար գուգահեռաբար տվել է տարվա կարևորագույն հիմնակետերի (գարնանամուտ, ամառնամուտ, աշնանամուտ, ձմեռնամուտ)կանոնները: Օր., «Գարնանամուտ այսպե՛ս արա. Դարձյալ կա՛լ ԲԱ (21) և գնահանջ նոր թուականին տո՛ւր նաւասարդի ամսոյ և գտանես»:

Իսկապես Մարկավազադիր 1 թվականին (1085 թ.) գարնանամուտը հայոց Մեծ թվականով Նավասարդի 21-ին էր, իսկ 21-ին նոր նահանջը գումարելու դեպքում ստանում էին գարնանամուտի (մարտ 20-ի) հայկական համարժեքի ամիս-ամսաթիվը:

Հայոց «Պատճենի» շարունակության մեջ կանոններն արդեն վերաբերում են եկեղեցական տոներին, ինչպես և գատկական լրմանը, որտեղ կանոնների մի մասն արտացոլված է հայոց Մեծ թվականի 1-ին պարբերաշրջանով, իսկ մյուսը՝ 2-րդ պարբերաշրջանով, ինչպես և Մարկավազադիր տոմարով, որոնք սկսվում են «կամ» և «դարձեալ կա՛լ» արտահայտություններով:

«Յայտնութիւն այսպե՛ս [արա]. Կա՛լ գնահանջն, տո՛ւր մեհեկի ամսոյ կամ կա՛լ... ԺԳ (13) եւ գնոր նահանջն տո՛ւր Մարգաց ամսոյ, եւ գտանես»:

Կանոնի առաջին մասը վերաբերում է հայոց Մեծ թվականի 1-ին, իսկ երկրորդ մասը՝ 2-րդ շրջապտույտին, քանի որ Հայտնության օրը 1-ին Շեակի 1-ին քառամյակից հետո համընկնելով Մեհեկանին, 532 տարի հետո համընկել է Մարգաց 12-ին: 2-րդ շրջապտույտի 1-ին քառամյակում՝ Յայտնութիւնը եղել է Մարգաց 13-ին:

Մարկավազը «Լրումն Ջատկի» կանոնի մեջ 44 հաստատուն թիվը փոխարինել է 46-ով, որի բացատրությունը տրվել է մեկնության տարբեր հատվածներում:

Հովհաննեսին են նաև, Յայտնութեան, Առաջավորացը Բարեկենդանի,

Աստվածածանի Վերափոխման տոնի, Մուրբ Խաչի, Յիսնակամտի կանոնները:

Լուսնի ընծայումը նախորդ շրջանում հաշվել են մասերով, իսկ այս «Պատճենում» նաև ըտպեներով, որը Սարկավագի խմբագրման արդյունք է:

«Ըտպե ըստ հայ ամառ այսպե՛ս արա. որով ընծայումս լուսնի...»:

Թիվ 1999 գրչագրի «Պատճեն տումարի ըստ հայոց եղանակաց» վերնագիրը կրող բնագրի ստեղծողը Հովհաննես Սարկավագն է, քանի որ նրա առաջին երկու կանոններն արտացոլում են Շ-եակի 2-րդ շրջապտույտի (1085 թ. նն, հայոց անշարժ տոմարի) տումարական իրողությունները, իսկ մնացած կանոնները խմբագրել է Մամուել Անեցին: Բերենք մեր դիտողությունները հիմնավորող փաստերը՝ ներկայացնելով «Պատճեն տումարի ըստ հայոց եղանակաց»-ի համապատասխան հատվածը. Ը, Գ, ԺԳ, Թ, Զ, Զ, Ժ, ԺԱ, ԺԱ, ԻԲ, Թ:

«Կա ի ԻԲ (22) եւ զհասարակած Հայոյն Յայտնութիւն է Հայոյն ...»:

«Կա ի զՅայտնութիւնն, Ը (8) ի վերա՛բեր, (նաւասարդի) տո՛ւր՝ գարնանամուտ է»:

Հայտնի փաստ է, որ Շ-եակի 2-րդ շրջապտույտի 1-ին քառամյակին գարնանամուտն ընկել է Նաւ.-ի 21-ին, իսկ Յայտնութիւնը՝ Մարգաց 13-ին:

Հաջորդ հիմնավորումը գալիս է անշարժ տոների, տարվա եղանակների, աստղագիտական երևույթների՝ հայոց շարժական տոմարի ամիսների շարքը գտնելու վերլուծությունից:

Հայոց Փոքր թվականի կամ Շ-եակի 2-րդ շրջապտույտի հաստատունները և ամառաշարքի ամսաթվերը ցույց են տալիս, որ այն սկսվել է 1085 թվականից:

Հայոց շարժական տոմարի ամսաշարքի (1-30) առաջին թվականների վերին սահմանն է 1068 թվականը (Յայտնութեան բարեկենդանի կտրվածքում), իսկ 2-րդ շարքի ներքին սահմանն է 1111թ. (Յիսնակամտի և Ձմեռնամուտի կտրվածքներում): Ակնհայտ է, որ հեղինակն ապրել է 1068 -1111 թթ սահմաններում, իսկ միջին թիվն է 1089-ը: Հայտնի է, որ Հովհ. Սարկավագը տոմարի մեկնությունը գրել է 1094 թ., իսկ Շ-եակի 2-րդ շրջապտույտն սկսվել է 1085 թ.-ին:

Ի դեպ, 1999 թվահամարի գրչագրի առաջին ժողովածուի «Պատճենի» մեջ, որը Ստեփանոս Մեծրկա որդու խմբագրությունն է, վերոհիշյալ կանոնները պարզապես վերարտադրությունն են Հովհաննես Սարկավագի խմբագրության (12 կանոններից 10-ը Սարկավագին են), և չեն բերված Շ-եակի 1-ին շրջապտույտի հաստատունների տվյալները:

Իրավամբ էլ, ըստ իր «Ազգաց կանոնների», գարնանային հասարակածը՝ մարտի 20-ը, գուգադրված է Արեգի 12-ին, ամառային արևադարձը՝ հունիսի 19-ին՝ գուգադրված է Մարգաց 13-ին նն, որոնցից շատերի համար նաև կանոններ է սահմանել: Մնացած ամիս-ամսաթվերն էլ Սարկավագադիր տոմարի ամիս-ամսաթվեր են:

Սարկավագինն է նաև «Բ նահանջի ամի ամիսն մեհեկանի ԼԱ լինի և յաւելու է [երեակ] թիւ մի, որպէս այլոց ազգաց»:

Հովհաննես Սարկավագը կազմել է «**Լուսնացոյց**» և դրել իր տումարական ժողովածուի հոմեացոց կամ հայոց «Պատճենի» մեջ: Հովհաննես Սարկավագի կազմած «Լուսնացոյց», որը մեզ չի հասել, սակայն «Ազգաց կանոնների» միջոցով անուղղակի հասել են Լուսնի ծնունդների տվյալները: Հարկ է նշել, որ 1999

թվահամարի գրչագրում պահպանված կանոնը բնագրային է, և Հովհաննես Սարկավագն այն հաշվել է հոմեական Փոքր թվականով:

Բերենք այն. «Զմուտ Լուսնացոյցիս այսպէս արա՛ւ. Կա՛լ զՓոքր թուական Հռոմմին, Թ (9) երթ և զայն է՛րթ ԺԹ (19), ԺԹ (19), որ ի խոնարհ մնայ՝ Ա (1), Ա (1), մի մի դիմակացն տո՛ւր՝ սկսեալ ի սկիզբն դորա և գտանես ի գլուխ դիմակին զվերադիր ամին և զհնգեակն, զծնունդ Լուսնին եւ զքանիքն, գտին եւ զգիշերն, զժամն և զմասն, զլրմանն եւ զծննդեանն»:

Նույնպէս եւ ամենայն բոլորից զմնացայն Ա (1), Ա (1) խորանացն տո՛ւր եւ գտանես ի սպառումն թուոյն զխնդրելին»:

Կատարենք կանոնով նախատեսված հաշվարկը Սարկավագի Արևի խավարման հատվածի հոմեական Փոքր թվականի տարով, այն է՝ 333 թ.-ով, որից հանենք 9 կստանանք 324, բաժանենք 19-ի մնացորդում կունենանք մեկ, որն իսկապես նրա 19-ամյակի 1-ին տարին է (ապրիլ 4-ի լրման տարին): Վերոհիշյալ հաշվարկը հաստատվում է Փոքր թվականով, որն այդ տարում 29-ն է: Հայոց Փոքր թվականի կանոնը, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքի մեջ, նույնն է, ուստի 29 – 9 = 20 : 19-ի մնացորդում կունենանք 1:

Փաստորեն, Շիրակացու կազմած 19-ամյակի վրա Հովհաննես Սարկավագն ավելացրել է միայն վերադիրների իր համակարգը, որով և դրանք տարբերվում են միմյանցից:

Իսկ սա նշանակում է, որ Հովհաննես Սարկավագը եղել է Շիրակացու 19-ամյակի առաջին խմբագիրը, բացի դրանից, երբ Հովհաննեսը պատկերում է հոմեական 19-ամյա աղյուսակները, դրանց վերադիրները, տեսնում ենք, որ առաջինն իրենն է, իսկ երկրորդը՝ Ան. Շիրակացունը:

Հովհաննես Սարկավագն իր «Արևի խավարման մասին» գրած նամակում կիրառել է հին հնգյակների արժեքները, որոնցով հաշվել են գիշերվա ու ցերեկվա ժամերն ու մասերը: Մյուս կողմից «Ազգաց կանոններում» և առկա «Լուսնացոյցում», ինչպես և մեկնության մեջ կիրառել է նոր հնգեակների և վեցեակների համակարգը՝ սկիզբ ընդունելով ապրիլ 4-ի լրման տարին:

Ատենախոսության երկրորդ գլխի մի զգալի հատված նվիրված է Հովհաննես Սարկավագի օգտագործած՝ տարբեր ազգերի թվականության համակարգերի քննությանը, որոնք կազմել են հայոց «Պատճենի» մաս:

Այս հատվածում քննության են առնվել ինչպես մեկնության մեջ և 1113 թվականին գրված՝ Արևի խավարմանը նվիրված տումարական պատառիկում օգտագործված թվականները՝ Հայոց Մեծ և Փոքր, հայոց Քրիստոնեական թվականի 2-րդ տարբերակները, Հռոմեական Մեծ և Փոքր, Հռոմ քաղաքի շինության, Դիոկղետիանոսի, Անտիոք քաղաքի շինության, Կիւրղոս քաղաքի շինության, արարչության 70-իցի, Օլիմպիական թվականները, այնպես էլ այլ բնագրերում պահպանվածները՝ շամրտացոց, Շ-եակ նն՝ հարաբերակցելով հայոց թվականության համակարգերի հետ: